

Արձանագրություն N 1-02/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2017 թ.-ի
փետրվարի 9-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր) Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ., դասախոս), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թորմաջյան Վ.Հ. (տ.գ.դ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ., դոցենտ), Մուսայեյան Վ.Ս., Շահբազյան Ա.Վ., Հակոբյան Ռ.Ս.:

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ), Հարությունյան Ռ.Մ. և ճարտարապետաշինարարական ֆակուլտետի դեկան՝ Իսրայելյան Ռ.Գ.:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ուսանողների բացակայությունների վերլուծության մասին

2.Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանի և աշակերտների պարզևատրման մասին

Լսեցին 1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ուսանողների բացակայությունների վերլուծության արդյունքները գիտխորհրդին ներկայացրեց ուսումնական բաժնի վարիչ՝ Թ.Գրիգորյանը (արդյունքները կցվում են):

Որոշեցին 1.1-Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին ամենօրյա վերահսկողություն իրականացնել ուսանողների անհարգելի բացակայությունները գրանցելու, դրանք հնարավորինս նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

1.2-Անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար ուսման վճարի զեղչ չկատարել:

Լսեցին 2- Ներկայացվեց առաջարկություն Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանին և աշակերտներին պարզևատրելու մասին:

Որոշեցին 2- Գիտխորհրդի քննարկմանը ներկայացնել Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանի և աշակերտների պարզևատրելու մասին ռեկտորատի որոշումը:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թորմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Թ.Գ.Գրիգորյան

